[1] Դուրս գրման ամսաթիվ			Հարկային հաշիվ (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)	[2] Սերիա	[3] Համար
10	Դեկտեմբեր	2018 թ.		Ա	4596693017
[4] Մատակարարման ամսաթիվ				Ճշգրտվող հաշվի	
10	Դեկտեմբեր	2018 թ.		Սերիա	Համար
				Ճշգրտվող հաշվի դուրս գրման ամսաթիվ	

Պայմանագիր	[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի	
[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0 1 5 0 3 4 4 8
[9] Անվանումը	«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» Հիմնադրամ
[10] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	0 1 5 0 3 4 4 8 / 1
[11] Բանկային տվյալները	Հայբիզնեսբանկ ՓԲԸ N 11500166513800
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ԹԱՂԱՄԱՍ Կորյունի 2
[13] Լրացուցիչ տվյալներ	

Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի	
[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0 2 6 3 1 2 6 3
[15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	
[16] Անվանումը	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ
[17] Բանկային տվյալները	ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն N 900011000834
[18] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5
[19] Լրացուցիչ տվյալներ	
[20] Ում միջոցով	Անուն, ազգանուն
	Լիազորագիր: Համար
	Ամսաթիվ

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

N	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը)	Չափման միավորը	Ընդհանուր ծավալը (ծավալաչափ բջանց)	Միավորի գինը	Զեղչ(%)	Արժեքը	ԱԱՀ դրույքաչափը (%)	ԱԱՀ գումար	Ընդամենը
1	2	3	4	5	6	7	8	9	10
1	91263417 դատահոգեբանական փորձաքննություն	հատ	1	32833.33		32833.33	20	6566.67	39400
Ընդամենը						32833.33	X	6566.67	39400

Դուրս գրող՝ PARSEGHYAN LARISA 6808700354
պահեստապետ (գլխավոր հաշվապահ) (անուն, ազգանուն)

Ստացող՝
պաշտոն ստորագրություն (անուն, ազգանուն)
պաշտոն ստորագրություն (անուն, ազգանուն)

10/12/2018 15:23:43

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

հետմահու համալիր դատահոգեբուժական, դատահոգեբանական փորձաքննություն նշանակելու մասին

«21» հուլիսի 2018թ. ք.Հադրութ

ՀՀ քննչական կոմիտեի ԶՔԳՎ երկրորդ կայազորային քննչական բաժնի պետ, արդարադատության երրորդ դասի խորհրդական Դ.Ա.Ֆլջյանս, վերանայելով վարույթում քննվող թիվ 91263417 քրեական գործի նյութերը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

2017 թվականի հոկտեմբերի 20-ին, ՊԲ 38401 զորամասից հեռախոսագիր է ստացվել այն մասին, որ նույն օրը ժամը 17:20-ի սահմաններում, ՊԲ 38401 զորամասի 5-րդ հրաձգային գումարտակի 15-րդ վաշտի 3-րդ դասակի 1-ին ջոկի հրաձիգ, պարտադիր ժամկետային զինծառայող, շարքային Հրաչ Արարատի Ավետիսյանը, նույն զորամասի հրաձգարանի տարածքում, իրեն ամրակցված ԱԿ-74 տեսակի «1272335» գործարանային համարի ինքնաձիգից կրակոց է արձակել իր ճակատի շրջանին և զինհոսպիտալ տեղափոխելու ճանապարհին մահացել:

Դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի ԶՔԳՎ երկրորդ կայազորային քննչական բաժնում 20.10.2017թ-ին ՀՀ քրեական օրենսգրքի 110 հոդվածի 1-ին մասով հարուցվել է քրեական գործը:

Նույն օրը, իրականացվել է դեպքի վայրի և Հ.Ավետիսյանի դիակի արտաքին զննություն, որի ընթացքում, դիակի ոտքերին և ձեռքերին հայտնաբերվել են տարբեր մարմնական վնասվածքներ, որոնք ըստ զննության մասնակից դատաբժիշկ-փորձագետի հայտարարության, ունեցել են 3-ից 5 օրվա վաղեմություն: Բացի այդ, կատարվել է համապատասխան զինծառայողների մարմինների քննում, վերցվել են անհրաժեշտ նմուշներ:

21.10.2017թ-ին կատարվել է դեպքի վայրի լրացուցիչ զննություն, որի ընթացքում Հ.Ավետիսյանի հրազենային վիրավորում ստանալու հրաձգարանի համապատասխան վայրում փորվածքներ կատարելու արդյունքում հայտնաբերվել է մեկ հատ 5.45մմ տրամաչափի փամփուշտ, որը վերցվել է:

Նախաքննության ընթացքում պարզվել է, որ Հրաչ Արարատի Ավետիսյանը ծնվել է 1997 թ-ին Արմավիրի մարզի Զրաշատ գյուղում, ընտանիքում երեք երեխաներից եղել է ավագը, բնակվել է Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա համայնքում: Վերջինս 7 տարեկանից հաճախել է հանրակրթական դպրոց և թիվ 91 միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո, ընդունվել է Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանին կից քոլեջ: Ընդհանուր առմամբ Հ.Ավետիսյանը սովորել է նորմալ, ավելի շատ սիրել է մաթեմատիկական առարկաները, նորմալ շփվել է հասակակիցների հետ, հարգանքով է վերաբերվել տարեցներին: Բնավորությամբ եղել է հանգիստ, համեստ,

տրամադրվել, այլ միայն հրաձգությունից անմիջապես առաջ տրվել են համապատասխան խմբին: Նոնականետորդների խումբը, որի կազմում եղել է նաև շարքային Հ.Ավետիսյանը մինչև ժամը 17:00-ն, սպասել է հրաձգության հերթին, իսկ ժամը 17:00-ից վաշտի հրամանատարի հրամանով սկսել են զենքի մաքրում, որի ընթացքում շուրջ 15 հոգուց բաղկացած խումբը նստել է կողք-կողքի՝ հրաձգարանի տարածքում առկա թմբի երկայնքով, իսկ շարքային Հ.Ավետիսյանը նստել է աջ կողմում՝ վերջինը և յուրաքանչյուրը մաքրել է իրեն ամրակցված զենքը: Այդ ժամանակ, զինծառայողների միջև խոսակցություն է ծավալվել Հ.Ավետիսյանի հետ, որի ընթացքում վերջինիս հարցրել են, թե ինչով է նա զբաղվել քաղաքացիական կյանքում, որի ընթացքում նույն շարքում նստած շարքային Գ.Պետրոսյանը Հ.Ավետիսյանին անվանել է «գառլախ», ինչպես նաև դիմելով նույն շարքում Հ.Ավետիսյանի կողքին նստած շարքային Ա.Հովեյանին, ասել է, որ զգույշ լինի, քանի որ նրա մոտ «գառլախ տարածք կա», այնուհետև Գ.Պետրոսյանը հայհոյանքներ է տվել Հ.Ավետիսյանին, վերջինս Գ.Պետրոսյանին ասել է, թե ինչու է իրեն հայհոյում, իսկ նա պատասխանել է, որ լավ է անում: Դրանից հետո, շարքային Հ.Ավետիսյանը իրեն ամրակցված ինքնաձիգը՝ պահեստատուփը ամրացված վիճակում պահել է շարքային Գ.Պետրոսյանի ուղղությամբ և ասել, որ իրեն խելոք պահի, ու ավելացրել է. «քեզ կկրակեմ, ինձ էլ, միասին կգնանք»: Գ.Պետրոսյանը վերջինիս պատասխանել է, որ մի կողմ քաշի ինքնաձիգը, այն էլ երբ այն լիցքավորված չէ, զենքն իր ուղղությամբ չպահի, քանի որ զենքը միայն «թուրքերի» վրա են պահում, որից հետո Հ.Ավետիսյանը ինքնաձիգի վրայի հանել է պահեստատուփը և ցույց տվել դրանում առկա երկու փամփուշտները, ինչը տեսնելով Գ.Պետրոսյանը հայհոյել է Հ.Ավետիսյանին զենքը վրան պահելու և չկրակելու համար, ինչին Հ.Ավետիսյանը որևէ պատասխան չի տվել, գլուխը կախ նստել է: Ներկաների նրանից պահանջել են, որ դեն նետի այդ փամփուշտները, ինչպես նաև տեսել են, որ նա դրանցից մեկը մտցնում է գետնի մեջ առկա անցքը: Ժամը 17:20-ի սահմաններում շարքային Հ.Ավետիսյանը իրեն ամրակացված ԱԿ-74 տեսակի ինքնաձիգից կրակոց արձակել իր ճակատի շրջանին ու ընկել է կողքի վրա, որից հետո անմիջապես վիրակապել են նրա գլխի շրջանի վնասվածքներն ու տեղափոխել են Ստեփանակերտի զինհոսպիտալ սակայն ճանապարհին Հ.Ավետիսյանը մահացել է:

21.102017թ-ին Գ.Պետրոսյանը ՀՀ քրեական օրենսգրքի 359 հոդվածի 1-ին մասով և ՀՀ քրեական օրենսգրքի 359 հոդվածի 1-ին մասով առերևույթ կատարած հանցագործություններ կատարման կասկածանքով ձերբակալվել է:

24.10.2017թ-ին որոշում է կայացվել Գ.Պետրոսյանին որպես մեղադրյալ ներգրավելու մասին ՀՀ քրեական օրենսգրքի 359 հոդվածի 1-ին մասով, ՀՀ քրեական օրենսգրքի 359 հոդվածի 1-ին մասով և ՀՀ քրեական օրենսգրքի 359 հոդվածի 1-ին մասով և նույն օրը վերջինիս մեղադրանք է առաջադրվել, որում նա իրեն լիովին մեղավոր է ճանաչել:

12.12.2017թ-ին որոշում է կայացվել մեղադրյալ Գ.Պետրոսյանին առաջադրված մեղադրանքը փոփոխելու և նոր մեղադրանք առաջադրելու մասին ՀՀ քրեական օրենսգրքի 359 հոդվածի 1-ին մասով, ՀՀ քրեական օրենսգրքի 359 հոդվածի 1-ին մասով, ՀՀ քրեական օրենսգրքի 359 հոդվածի 1-ին մասով, ՀՀ քրեական օրենսգրքի 359 հոդվածի 1-ին մասով, ՀՀ քրեական

օրենսգրքի 359 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և ՀՀ քրեական օրենսգրքի 358 հոդվածի 3-ր մասի 1-ին կետով և նույն օրը վերջինիս մեղադրանք է առաջադրվել:

Նախաբնության ընթացքում մեղադրյալ, ՊԲ 38401 զորամասի 5-րդ հրաձգայ գումարտակի 15-րդ վաշտի 3-րդ դասակի 1-ին ջոկի գնդացրորդ, շարքային Գևորգ Հովհ Պետրոսյանը ցուցմունք է տվել այն մասին, որ 2017թ-ի հուլիսի 17-ին Մարտակեր զինկոմիսարիատի կողմից զորակոչվել է զինված ուժեր և ծառայության է նշանակվել ՝ 38401 զորամասի 5-րդ հրաձգային ուսումնական գումարտակի 15-րդ վաշտի 3-րդ դասակ որպես 1-ին ջոկի ԿՁԳ գնդացրորդ, կոչումով շարքային: Համատեղ ծառայությունից ճանա է նույն դասակի ժամկետային զինծառայող, շարքային Հ.Ավետիսյանին, վերջինիս հ գտնվել է ծառայողական փոխհարաբերությունների մեջ: 2017 թվականի հոկտեմբերի 17- ժամը 11:00-ից 12:00-ն ընկած ժամանակահատվածում, վաշտի ննջարան զինծառայողներով ձմեռային գլխարկների և ձեռնոցների վրա շտիխով գրառումներ կատարվել, որի ժամանակ կատակով <<կտցրել>> է շարքային Հ.Ավետիսյանի գլխին, համար վերջինս վիրավորական արտահայտություն է արել, ինչից վրդովվել է վիճաբանություն է առաջացել և ցանկացել է հարվածել նրան, սակայն Հ.Ավետիսյ ձեռքով կասեցրել է իր հարվածը և բռունցքով պատասխան հարվածել է հասցրել, ինչի պատասխան ինքը բռունցքներով հարվածներ է հասցրել Հ.Ավետիսյանի ուսի կրծքավանդակի աջ հատվածներին, ապա ծնկով հարվածել է նրա ոտքին, ինչից հ Հ.Ավետիսյանը իրեն բաց է թողել: Դրանից հետո, մոտեցել է Հ.Ավետիսյանին, հրել է նր ապա երկու ձեռքով բռնել է հարակից մահճակալներից, ոտքերով հարվածել Հ.Ավետիսյանի կրծքավանդակին, ինչից Հ.Ավետիսյանը հետ է գնացել և հենվե կողապահարանին, որից հետո հեռացել է, որ պատասխան հարված չստանա: 2017 թվակ հոկտեմբերի 18-ին՝ ժամը 15:00-ի սահմաններում, վաշտի զինծառայողները գումարտ նոր մասնաշենքի համար սեղաններ և մահճակալ են տեղափոխել, որի ընթացքում վաշտ քանի զինծառայողների հետ մեքենայից դուրս են հանել գույքը և տվել մ զինծառայողներին, որպեսզի վերջիններս տեղափոխեն մասնաշենք: Այդ ժամանակ շենք րդ հարկից բարձր ձայներ և հայհոյանքներ է լսել, որից հետո մտել է ներս, ու նկատել շինության պատը վնասված է և տեղեկացել է, որ դա արել են վաշտի զինծառա շարքային Վլադիմիրը Սամսոնյանը և Հ.Ավետիսյանը, որից հետո մոտեցել է վերջինի ձեռքի ափի դրսի մասով հարվածել է նրա ուսի շրջանին, ապա ծնկի մասով հարվ հետույքին և ասել <<ինքնասիրություն չունեք, ասեք, որ դուք եք արել>>, այնուհետև բ մատով և ցուցամատով բռնել է Հ.Ավետիսյանի ձախ թուշը և ասել <<հեսա կխոս քաղաքացիական անձանց հետ>>: 2017 թվականի հոկտեմբերի 17-ին տեսել է, Հ.Ավետիսյանը առանձին խոսելիս է եղել վաշտի զինծառայող, շարքային Հայկ Մկրտչ հետ, մոտեցել է նրանց և տեսել, որ Հ.Մկրտչյանը ուժեղ ապտակել է Հ.Ավետիսյանին, ո հետո վերջինիս հանգստացնելու համար, մոտեցել Հ.Ավետիսյանին և համբուրել նրա թ Բացի այդ 2017 թվականի սեպտեմբեր կամ հոկտեմբեր ամսին, հստակ օրը չի հի Հ.Ավետիսյանը իրեն հայտնել է, որ կապի վաշտի զինծառայողի՝ ում անունը չի ասել, ծ

նույնպես մանրամասներ չի իմացել: 2017թ-ի հոկտեմբերի 20-ին, ժամը 10:00-ի սահմաններում, վաշտի անձնակազմի հետ, սպաների ուղեկցությամբ, գնացել է զորամասի հրաձգարան կրակային պարապմունքներ իրականացնելու նպատակով, որոնց թվում է եղել նաև Հ.Ավետիսյանը և նորմալ տրամադրություն է ունեցել: Ուսումնական կետորում իրականցրել են պարպմունքներ, այնուհետև ըստ անձնակազմի և զենքերի տեսակների բաժանվել են խմբերի, հրաձգություն են կատարել, այնուհետև կրակի կառավարման շինության հարակից տարածքում կատարել են ամրակցված զենքերի մաքրման աշխատանքներ: Ապա, ժամը 17:20-ի սահմաններում, երբ գտնվել է նշված շենքի մոտ, զենք մաքրող անձնակազմի կողմից լսել է կրակոցի ձայն, ապա որոշ ժամանակ անց տեղեկացել է, որ Հ.Ավետիսյանն է կրակել գլխի շրջանին և նրան տեղափոխում են զինհոսպիտալ: Այնուհետև անձնակազմի հետ վերադարձել է զորամաս, ապա տեղեկացել, որ վերջինս մահացել է: Զորամասում տիրող ընդհանուր խոսակցություններից, տեղեկացել է, որ վերը նշված ժամանակ զենք մաքրելիս Հ.Ավետիսյանի կողքը նստած է եղել համածառայող, շարքային Արտյոմ Հովեյանը և վերջինիս Գ.Պետրոսյանն ասել է, թե << Խի ես նստել այդտեղ, այդտեղ գաղլաք տարածք է>>, որով նկատի է ունեցել Հ.Ավետիսյանին ու նաև այն որ վերջինիս մոտ փամփուշտներ են եղել: Ինքը հայտնել է, որ Հ.Ավետիսյանի նկատմամբ երբևէ բռնություն չի գործադրել, նրա պատիվն ու արժանապատվությունը չի ստորացրել:

հատոր 6 Գ.Է. 51-58

<u>Նախաբննության ընթացքում կրուժողի իրավահաջորդ Արարատ Հրաչիկի Ավետիսյանը ցուցմունք է տվել այն մասին, որ</u> ամուսնությունից ունեցել է երեք երեխա՝ Հրաչը, Հայկը և կրտսեր դուստրը՝ Արփին: Հրաչը եղել է նրա ավագ որդին և եղբոր՝ Հայկի հետ 2017թ-ի օգոստոսի 20-ին զորակոչվել են ժամկետային զինվորական ծառայության և նշանակվել են ՊԲ38401 զորամասի 5-րդ գումարտակում: Որդին Հրաչը բնավորությամբ կենսուրախ և շփվող է եղել, կյանքում որոշումներն ու գործողությունները կատարել է կշռադատված, իմպուլսիվ դրսևորումներ չի ցուցաբերել, այդ առումով նախաձեռնող չի եղել, սխալները միշտ իր մեջ է փնտրել, առաջացած խնդիրները ցանկացել է լուծել անձամբ, դրանց վերաբերյալ ծնողների կամ եղբոր հետ չի կիսվել: Զորակոչվելուց հետո, ծառայությունից չի բողոքել, սակայն գիրության պատճառով դժվարացել է ֆիզիկական պատրաստությունից, ինչպես նաև ունեցել է առողջական խնդիրներ: Ծառայության ընթացքում Հրաչը բավական նիհարել է ու նաև բուժում է ստացել ինչպես զորամասի բուժկետում, այնպես էլ Ջեբրայիլի զինհոսպիտալում: Հրաչի հետ ինքն ու կինը մշտապես գտնվել է կապի մեջ, հաճախ հետը խոսել է հեռախոսով և այդ ընթացքում նրա նկատմամբ բռնություն գործադրելու կամ վիրավորելու մասին որևէ տեղեկություն չի հայտնել: 2017թ-ի սեպտեմբերի վերջին կամ հոկտեմբերի սկզբին, կնոջ հետ գնացել է քաղաք Հաղրութ և տեսակցել է որդիներին՝ Հրաչին և Հայկին, վերջիններիս ազատ արձակում են տվել և մի քանի ժամ միասին են անցկացրել, որի ընթացքում Հրաչը որևէ դժգոհություն չի հայտնել: Այդ օրը, կրտսեր որդին՝ Հայկն ասել է, Հրաչը ինչ-որ զինծառայողի ծնողի հասցեին հայհոյանք է տվել և դրա հետ կապված խնդիրներ ունի: Ինքը Հրաչին հարցրել է դրա

եղբայրը մահացել է , իսկ դրա պատճառների մասին հրամանատարությունն իրեն հայտնել
որ պտահաբար ամրակցված ինքնաձիգից կրակել է գլխի շրջանին, բայց այլ մանրամասներ
իմացել: Եղբորը բնութագրել է որպես հանգիստ, ոչ կոնֆլիկտային անձնավորության, ։
փորձել է շրջանցել առջևը ծառացած խնդիրները և դրանց լուծմանը գնացել է միայն նրան
հետո, երբ գիտակցել է, որ շրջանցումը հնարավոր չէ:

հատոր 3 Գ.Է.243-250, 260-261

*Նախաբննության ընթացքում ՊԲ 38401 զորամասի 5-րդ հրաձգային գումարտակի 15-։
վաշտի 3-րդ դասակի 1-ին ջոկի նռնակաձիգ, շարքային Բախշի Պետրոսի Հարությունյա
ցուցմունք է տվել այն մասին, որ* 2017թ-ի հուլիսի 20-ին Կոտայքի զինկոմիսարիատի կողմ
զորակոչվել է զինված ուժեր և պարտադիր ժամկետային զինվորական ծառայության
նշանակվել ՊԲ 38401 զորամասի 5-րդ հրաձգային ուսումնական գումարտակի 15-րդ վաշտի
րդ դասակում որպես 1-ին ջոկի նռնակաձիգ: Համատեղ ծառայությունից ճանաչել է նու
դասակի ժամկետային զինծառայող, շարքային Հրաչ Ավետիսյանին և նրա հետ գտնվել
մտերիմ փոխհարաբերությունների մեջ, ծառայության ընթացքում նրա հետ հաճախակի է շփվ
և բնութագրել է որպես ընկերասեր, կատակասեր, հանգիստ, ոչ կոնֆլիկտային և վաշ
զինծառայողների հանդեպ հոգատար վերաբերմունք դրսևորող անձի, ով իր ծառայողակ
պարտականությունները կատարել է նորմալ: Վերջինս սրտի հետ կապված առողջական խնդ
է ունեցել և դժվարացել է ֆիզիկական պատրաստությունից: 2017թվականի հոկտեմբերի 19-
զորանոցում տեսել է, որ համածառայող Գ.Պետրոսյանը երկհարկանի մահճակալնե
արանքում՝ երկու ձեռքերով հենվելով մահճակալներին ոտքերով հարվածել է Հ.Ավետիսյա
կրծքավանդակին, ինչից վերջինս հետ գնալով ընկել է պահարանի վրա, սակայն վերջի
Գ.Պետրոսյանին որևէ բան չի ասել, պատասխան հարված չի հասցրել, հայհոյանքներ չի տ
2017 թվականի հոկտեմբերի 17-ին՝ ժամը 11:00-ից 12:00-ի սահմաններում, երբ ինքը կանգնա
եղել վաշտի զորանոցի դռների մոտ, զորանոցի ներսից երկու զինծառայողի բարձր գոռգոռ
ձայներ, ապա փոխադարձ հայհոյանքներ է լսել, անմիջապես մտել է զորանոց և տեսել, որ 3-
դասակի զինծառայող, շարքային Գևորգ Հովիկի Պետրոսյանը և շարքային Հրաչ Ավետիսյա
հայհոյանքներ են տալիս և միմյանց համազգեստից քաշքշում, այդ պահին Գ.Պետրոսյա
երկու բռունցքներով հարվածել է Հ.Ավետիսյանի կրծքավանդակի շրջանին, որից հետո ին
մոտեցել է նրանց, բաժանել և Հ.Ավետիսյանին հարցրել է, թե <<ինչ եք անում>>, վերջի
պատասխանել է <<կատակ ենք անում>>, սակայն նրանց հայհոյանքներից, վիճաբանութ
բարձր գոռգոռոցներից, քաշքշուկից, Գ.Պետրոսյանի հարվածից և նրանց դեմքերի լ
արտահայտությունից հասկացել է, որ դա կատակի նման չէ: Դրանից հետո, զրուց
Հ.Ավետիսյանի հետ, վերջինս ասել է, որ այլևս չի ցանկանում Գ.Պետրոսյանի հետ կատակ
2017թ-ի սեպտեմբեր ամսին, զորամասում Հ.Ավետիսյանը իրեն հայտնել է, որ զորամասի
ստրաբաժանման զինծառայողներից մեկի հետ վիճել է, ինչի կապակցությամբ հարցրել է,
ինչ է եղել, ինչին Հ.Ավետիսյանը պատասխանել է, որ այդ հարցով եղբորն է ասել և
կարգավորել է: Դրանից մի քանի օր անց, զորամասում հանդիպել է Հ.Ավետիսյանի եղբորը
րդ հրաձգային գումարտակի զինծառայող, շարքային Հայկ Ավետիսյանին, վերջինիս հարցր

թե <<լավ եմ անում>>: Դրանից հետո տեսել է, որ Հ.Ավետիսյանը նստած տեղից ինքնաձիգը ուղղել է Գ.Պետրոսյանի ուղղությամբ և ասել է <<Կկրակեմ>>, իսկ Գ.Պետրոսյանը նրան ասել է, որ զենքը մի կողմ տանի և կրկին սեռական բնույթի հայհոյանքներ է տվել վերջինիս հասցեին, իսկ Հ.Ավետիսյանը զենքը իջեցնելով ոչինչ չի ասել, միայն գլուխը կախել և նստել է: Դրանից հետո ինքը, շարունակել է զբաղվել իր զենքի մաքրման աշխատանքով և մոտ 5 րոպե անց ինքնաձիգի մենահատ կրակոց է լսել և թեքվելով տեսել է, որ Հ.Ավետիսյանը ընկած է գետնին, ԱԿ-74 տեսակի ինքնաձիգը ընկած է նրա կողքը, գլխից արյուն է հոսել: Դրանից հետո ինքը և հողաթմբին գտնվող զինծառայողների մի մասը վազելով գնացել են կապիտան Է.Ղույանի մոտ և հայտնել, որ Հ.Ավետիսյանը վիրավորվել է, իսկ զինծառայողների մոտեցել են Հ.Ավետիսյանին և փորձել են բուժօգնություն ցուցաբերել: Կատարվածից հետո համածառայողների խոսակցություններից ասել են, թե <<Պոնչոն իրեն խբեց>>, այսինքն՝ Հ.Ավետիսյանը ինքնասպան է եղել: Ապա Է.Ղույանը անմիջապես գնացել է Հ.Ավետիսյանի մոտ, կատարվածի մասին զեկուցել է վերադաս հրամանատարությանը, մոտ 5 րոպե անց զորամասի սանիտարական ավտոմեքենայով Հ.Ավետիսյանին տեղափոխել են զինհոսպիտալ, իսկ մեկ կամ երկու ժամ անց սպաների խոսակցությունից տեղեկացել է, որ Հ.Ավետիսյանը զինհոսպիտալի ճանապարհին մահացել է:

հատոր 1 Գ.Է. 229-236, հատոր 2 133-143, հատոր 3 155-160

Վկա, ՊԲ 38401 զորամասի 5-րդ հրաձգային գումարտակի, 15-րդ վաշտի 2-րդ դասակի 3-րդ ջոկի նռնականետորդ, շարքային Արտյոմ Զավենի Հովհաննիսյանի ցուցմունքով այն մասին, որ Հրաչ Ավետիսյանին ճանաչել է շուրջ 1 ամիս նույն վաշտում համատեղ ծառայությունից և նրա հետ գտնվել է զինվորական կանոնադրային փոխհարաբերությունների մեջ, մտերմություն չեն արել: Շարքային Հ.Ավետիսյան շփվող կատակասեր անձնավորություն է եղել, սակայն չի նշել որևէ մեկին, ում հետ նա գտնվել ընկերական հարաբերությունների մեջ, նա եղել է մաքրասեր, չի խուսափել զինվորական ծառայության պարտականությունները կատարելուց: Հրաչ Ավետիսյանի հարազատ եղբայրը՝ Հայկը, նույնպես ծառայել է նույն զորամասում, բայց նրան չի ճանաչել: 2018 թվականի հոկտեմբերի 20-ին, ժամը 09:00-ի սահմաններում, ճաշարանից դուրս գալու հետո, վաշտի կազմով գնացել են զորամասի հրաձգարան կրակային պարապմունքներ կատարելու համար: Զորամասում ստացել են իրենց զենքերը, ինչպես նաև երկ դատարկ պահեստատուփ: Հրաձգարանում բաժանվել են խմբերի՝ ըստ զինատեսակների և ինքն ու Հրաչը ընդգրկվել են նռնականետորդների խմբում: Մինչև ճաշը՝ ժամը 14:00 ուսումնական կետերից մեկում, դատարկ պահեստատուփերից մեկը տվել են վաշտ ավագին՝ փամփուշտներով լիցքավորելու համար, սակայն իրենք փափուշտներ չեն ստացել և միայն հրաձգություն իրականացնողներն են ստացել դրանք: Սկզբում հրաձգություն գնացել սերժանտական կազմը, իսկ երբ նրանք ավարտել են, կրակելու են գնացել գնդացրորդները: Ժամը 17:00-ի սահմաններում վաշտի հրամանատար, կապիտան Էր Ղույանի հրամանով նռնականետորդների խումբը, ինչպես նաև ԿՁԳ գնդացրորդներ ովքեր արդեն կրակել էին, նստել են հրաձգարանի մուտքի մոտ առկա թմբին և սկսել

ստացել: Հ.Ավետսիյանին բնութագրել է որպես բնավորությամբ հանգիստ ու համեստ անձնավորության, չի նկատել, որ մեկուսացված լինի, բոլորի հետ գտնվել է նորմալ հարաբերությունների մեջ, բայց որևէ մեկի հետ մտերմություն չի արել, եղել է մաքրասեր, համածառայողների շրջանում իշխող դիրք չի ունեցել, եղել է հնազանդվող, չի խուսափել որևէ պարտականության կատարումից, նրա հարազատ եղբայրը՝ Հայկ Ավետիսյանը, նույնպես ծառայել է զորամասում, իսկ որոշ ժամանակ՝ միևնույն դասակում: Հ.Ավետիսյանի հետ ծառայելու ընթացքում՝ 2017թվականի սեպտեմբերի կեսերին, երբ ընդգրկված է եղել ճաշարանի վերակարգում, 5-րդ հրաձգային գումարտակի կապի դասակի նորակոչիկ զինծառայողներից մեկը, ում միայն դեմքով է ճանաչել, մոտեցել է իրեն և ասել, որ Հ.Ավետիսյանի հետ խնդիրներ ունի, այն պատճառով, որ խոսակցության ընթացքում նա ուզել է իր զինվորական գրքույկը, ինչին պատասխանել է, որ մոտը չի, իսկ Հ.Ավետիսյանն իրեն չի հավատացել ու խաբողի <<սրբության>> հասցեին հայհոյանք է տվել, ինչի կապակցությամբ պարզաբանումներ դեռևս չեն եղել և լուրջ խոսակցություն է սպասվել: Դրանից հետո, ինքը Հ.Ավետիսյանին հարցրել է, թե ինչ խնդիրներ ունի նշված կապավորի հետ, ինչի կապակցությամբ Հ.Ավետիսյանը սկզբում չի ցանկացել ներկայացնել եղելությունը, բայց ասել է, որ եղբայրն է այդ հարցով զբաղվելու: Իսկ այն հարցին, թե ինչու է նման հայհոյանք տվել, վերջինս պատասխանել է, որ պատահաբար է ստացվել: Սեպտեմբերի 30-ին, գումարտակում պատահաբար հանդիպել է Հ.Ավետիսյանի եղբորը՝ Հայկին և հետաքրքրվել է, թե լուծվել է արդյոք նշված խնդիրը, ինչին վերջինս պատասխանել է, որ ամեն ինչ նորմալ է, խնդիրը լուծված է և հայտնել է, որ 5-րդ հրաձգային գումարտակի հրամանատար, փոխգնդապետ Անդրեյ Համզոյանը կանչել է Հ.Ավետիսյանին և այդ կապավորին ու հաշտեցրել է՝ միմյանց ձեռք են սեղմել և այլևս խնդիրներ չունեն: 2017թվականի հոկտեմբերի 18-ին, առավոտյան ժամը 10:30-ի սահմաններում, 15-րդ վաշտի զորանոցում, վաշտի հրամանատարության հանձնարարությամբ կազմակերպվել է նորակոչիկների ձեռնոցների և գլխակների ''կլեյմավորում'', ինչը կատարվել է զորանոցում: Անհրաժեշտություն առաջանալու պատճառով, գնացել է երրորդ դասակի զորանոցի կողմ և երկրորդ դասակի զորանոցից վիճաբանության բարձր ձայներ է լսել, ապա տեսել է, որ Հ.Ավետիսյանը և Գևորգ Պետրոսյանը բռնել են միմյանց համազգեստներից և վերջինս փորձում է հարվածել Հ.Ավետիսյանին, բայց համածառայողները բաժանել են նրանց, ինքը մի կողմ է տարել ու հանգստացրել է Գ.Պետրոսյանին: Նույն օրը կեսօրին, վաշտի զինծառայողները գումարտակի հին զորանոցից գույքը են տեղափոխել և տեղավորել են գումարտակի նորակառույց մասնաշենքում, որտեղ շինարարական աշխատանքները դեռևս ավարտված չեն եղել: Վաշտի զինծառայողների մի մասը հին մասնաշենքից տեղափոխել է իրերը, իսկ մյուս մասը գտնվել է գումարտակի նորակառույց մասնաշենքի երկրորդ հարկում և տեղավորել դրանք սենյակներում: Երբ գտնվել է գումարտակի նորակառույց մասնաշենքի մուտքի մոտ, երկրորդ հարկից բարձր տոնով խոսակցություն է լսել, բարձրացել ու տեսել է, որ շինարարարներից մեկը երկրորդ հարկի մուտքի պատը վնասելու համար գայրացած հանդիմանել է վաշտի 2-րդ դասակի հրամանատարի տեղակալ, կրտսեր սերժանտ

գտել, որից հետո հորդորել են դրանք դեն նետել: Մի քանի րոպե անց, Հ.Ավետիսյանը ասել է, որ փամփուշտները մտցրել է նույն անցքի մեջ: Դրանից հետո, ինքը Հ.Ավետիսյանի կողմը այլևս չի նայել և մոտ 5 րոպե անց, ժամը 17:20-ի սահմաններում, երբ մաքրելիս է եղել ամրակցված զենքը, աջ կողմից լսել է, որ զինծառայողներից մեկն ասել է <<պակա>>, անմիջապես նայել է այդ կողմ ու տեսել, որ Հ.Ավետիսյանը նստած վիճակում, ամրակացված АК-74 տեսակի ինքնաձիգից կրակոց է արձակել ճակատի շրջանին և ընկել է կողքի վրա: Դրանից հետո, խառնաշփոթ է սկսվել, ինքն ու մի քանի զինծառայողներ վազքով գնացել և կապիտան Է.Ղուլյանին հայտնել են, որ Հ.Ավետիսյանը կրակել է գլխին: Մոտ 5 րոպե անց, զորամասի սանիտարական ավտոմեքենայով Հ.Ավետիսյանին տեղափոխել են զինհոսպիտալ, իսկ մեկ կամ երկու ժամ անց սպաների խոսակցությունից տեղեկացել է, որ զինհոսպիտալի ճանապարհին Հ.Ավետիսյանը մահացել է: Կատարվածից հետո, շարքայիններ Գ.Պետրոսյանին և Ա.Հովեյանին հարցրել է, թե ով է ասել <<պակա>> բառը, ինչին վերջիններս պատասանել են, որ նրանք չեն և հասկացել է, որ այդ արտահայտությունը Հ.Ավետիսյանն է արել ինքն իրեն կրակելուց առաջ:

հատոր 1 Գ.Է. 97-103

Նախաքննության ընթացքում ՊԲ 38401 զորամասի 5-րդ հրաձգային գումարտակի 15-րդ վաշտի զինծառայող, շարքային Արսեն Կարենի Արսենյանը ցուցմունք է տվել այն մասին, որ համատեղ ծառայությունից ճանաչել է վաշտի զինծառայողներ, շարքայիններ Գևորգ Հովիկի Պետրոսյանին և Հրաչ Արարատի Ավետիսյանին, վերջինիս հետ գտնվել է նորմալ փոխհարաբերությունների մեջ, իսկ Գ.Պետրոսյանի հետ վատ հարաբերություններ է ունեցել: 2017 թվականի հոկտեմբերի 18-ին, ժամը 15:00-ի սահմաններում, Հ.Ավետիսյանը, ինքը և վաշտի մի քանի զինծառայողներ, գումարտակի նոր մասնաշենք երկհարկանի մահճակալներ են տեղափոխել, որի ընթացքում Հ.Ավետիսյանի հետ պատահաբար վնասել են մասնաշենքի երկրորդ հարկի մուտքի պատը, ինչի մասին տեղեկացել է Գ.Պետրոսյանը և հայհոյել է Հ.Ավետիսյանին՝ ասելով. «ովա սրա հայմար պատասխան տալու», որից հետո բռունցքներով մի քանի անգամ հարվածել է նրա աջ ու ձախ կողերի հատվածներին, իսկ երբ շարքային Հ.Ավետիսյանը փորձել է պատասխան հարված հասցնել, Գ.Պետրոսյանը դիմել է փախուստի: Դրանից հետո, Հ.Ավետիսյանի հետ ցանկացել են հեռանալ, որի ժամանակ Գ.Պետրոսյանը հետևից, թաքուն մոտեցել և ձեռքի բաց ափով հարվածել Հ.Ա.Ավետիսյանի ծոծրակին, ապա ծիծաղելով փախել: Հ.Ավետիսյանը ուշադրություն չի դարձրել և շարունակել է հեռանալ, որից հետո Գ.Պետրոսյանը կրկին նույն կերպ մոտեցել և ոտքով հարվածել է Հ.Ավետիսյանի ոտքին: Վերջինս պատասխան հարված չի տվել և չի հայհոյել: Հ.Ավետիսյանը կատարվածից նեղսրտել է, Գ.Պետրոսյանը ծաղրանքով է նրա նկատմամբ բռնություն գործադրել, Հ.Ավետիսյանը չի կարողացել Գ.Պետրոսյանին պատասխանել:

հատոր 1 Գ.Է. 108-114, 227-228, հատոր 2 151-153, հատոր 3 75-78

ՊԲ 38401 զորամասի 5-րդ հրաձգային գումարտակի 15-րդ վաշտի զինծառայող,

աշխատանքներով, այդ կողմից կրակոցի ձայն է լսվել և անմիջապես վազել է այ
ուղղությամբ, և տեսել է ձախ կողքի վրա, մի քիչ էլ դեմքով դեպի գետնին պարկա
Հ.Ավետիսյանին, գլխի շրջանի վնասվածքով: Նրա կողքին նկատել է նաև վերջինի
զինվորական գլխարկը, որի վերին հատվածում պատռված մեծ անցք է եղել: Մոտ մե
րոպե անց այնտեղ է եկել նաև բուժօգնության մեքենան և զինծառայողների օգնությամ
Հ.Ավետիսյանը տեղափոխվել է նշված մեքենան և նրան տարել են զինհոսպիտալ: Դրանի
մի երկու ժամ հետո տեղեկացել է, որ Հ.Ավետիսյանը զինհոսպիտալի ճանապարհի
մահացել է: Հստակ օրերը չի հիշել, բայց հայտնել է, որ հաճախակի է ականատես եղ
այնպիսի դեպքերի, որ Գ.Պետրոսյանը միակողմանի ու անհաջող կատակներ է արվ
Հ.Ավետիսյանի հետ, որը արտահայտվել է Գ.Պետրոսյանի կողմից Հ.Ավետիսյանի գլխի
պարանոցին բաց ձեռքով հարվածելով, որը Գ.Պետրոսյան հիմնականում արել է, ա
զինծառայողների ներկայությամբ, ինչը Հ.Ավետիսյանի դուրը չի եկել: Կոնկրետ օրը չ
հիշել, բայց Հ.Ավետիսյանի և զորամասի կապի վաշտի զինծառայող, շարքայի
Մ.Աբրահամյանի միջև խոսակցությունից, պարզաբանումից, տեղեկացել է, ո
Հ.Ավետիսյանը ինչ որ զինգրքույկի շուրջ ծավալված խոսակցության ժամանակ արքությունն
վիրավորող հայհոյանք է հնչեցրել Մ.Աբրահամյանի հասցեին: Դրանից հետո
Հ.Ավետիսյանը հեռախոսը փոխանցել է Մ.Աբրահամյանին և ասել, որ խոսի իր եղբոր հետ
նշված հարցի շուրջ, խոսակցության ընթացքում Մ.Աբրահամյանը ասել է, որ <<կարամ ե
հեռախոսը ստանամ խլեշի տեղը>>, դա լսելով ինքը Մ.Աբրահամյանի ձեռքից վերցրել
հեռախոսը, խոսել է Հ.Ավետիսյանի եղբոր հետ, նրան ասել, որ թույլ չի տալիս որ վաշտի
ինչ որ մեկը նման բան անի՝ հեռախոս ստանա և վերջինս ասել է, որ եթե այդպես
հնարավոր է թող այդպես մնա այդ հարցը, մինչև ինքը մարտական հերթապահությունից
գա և կարգադրի, ավելացնելով, <<եթե կարող ես մի թող հեռախոսը տանի>>: Ինքը նրան
ասել է, որ կարող է և հեռախոսը կպահի իր մոտ մինչև ինքը վերադառնա մարտական
դիրքից: Դրանից հետո Մ.Աբրահամյանին ասել է, որ հեռախոսը պահել է մոտը և նա
վաշտից ոչինչ չի տանի մինչև Հ.Ավետիսյանի եղբայրը գա: Դրանից հետո, այդ օրը գիշերվ
կամ դրա հաջորդող օրը նորից իրենց վաշտ է եկել Մ.Աբրահամյանը և Հ.Ավետիսյանին
արթնացրել ու ասել, որ զրուցելու համար իջնի ծխարան, ավելացնելով <<Ետի իմ հարցն ա
ու ես չունեմ սպասելու>> ինքը նրանց հետ նույնպես գնացել է ծխարան, այնտեղ
Մ.Աբրահամյանը Հ.Ավետիսյանին ասել է. <<Դու ինձ խլեշ քֆուր ես արել, ու ինձ
առաջարկում ես, որ ես հարցը փակենք մի հատ հեռախոսով ու 15.000 դրամով>> ինքը
նրան հարցրել է, որ երբ Հ.Ավետիսյանն այդ արտահայտությունն արել է, ինչ պատասխան
է տվել նրան, Մ.Աբրահամյանը պատասխանել է, որ մեկ անգամ ապտակել
Հ.Ավետիսյանին, սակայն ներկաները թույլ չեն տվել որ վիճաբանությունը շարունակվի
Դրանից հետո, ինքը Հ.Ավետիսյանին բացատրել է, որ նման հայհոյանք հնչեցնել չի կարելի
ու սխալ է նշվածը հարթելու նպատակով հեռախոս և գումար առաջարկել: Այդ ժամանակ
Մ.Աբրահամյանը Հ.Ավետիսյանին ասաց <<Քո արածի համար ես կարող եմ բեգնիզ
ստանալ, թե գումար, թե հեռախոս>>, որից հետո Մ.Աբրահամյանին կրկին ասել է, ո
նշված թեմայի շուրջ ոչինչ չխոսեն մինչև Հ.Ավետիսյանի եղբայրը մարտական դիրքերից

հատոր 6 Գ.Է.40-47

<u>ՊԲ 38401 զորամասի 5-րդ հրաձգային գումարտակի 15-րդ վաշտի զինծառայող, շարքային Դավիթ Ջոնիկի Գևորգյանը ցուցմունք է տվել այն մասին, որ</u> համատեղ ծառայությունից ճանաչել է վաշտի զինծառայողներ, շարքայիններ Հրաչ Արարատի Ավետիսյանին և Գևորգ Հովիկի Պետրոսյանին: 16.10.2017թ-ից մինչև 22.10.2017թ-ը առողջական խնդիրների պատճառով գտնվել է ստացիոնար բուժման մեջ Մեխակավանի զինհոսպիտալում: զորամաս վերադառնալուց հետո տեղեկացել է, որ 2017թ-ի հոկտեմբերի 20-ին, վաշտի անձնակազմը կրակային պարապմունքներ իրականացնելու նպատակով մեկնել է զորամասի հրաձգարան, որտեղ Հ.Ավետիսյանը նույն օրը, 17:20-ի սահմաններում, զորամասի հրաձգարանում, զենք մաքրելու ժամանակ ամրակցված ինքնաձիգով իրակոց է արձակել գլխի շրջանին և ստացած հրազենային վնասվածքից մահացել է: Հ.Ավետիսյանը իրենց վաշտ է տեղափոխվել 2017թ-ի օգոստոս ամսին: Զինհոսպիտալ ուղեգրվելուց մոտ 10 օր առաջ, 16.10.2017թ-ին, երեկոյան ժամերին, երբ ինքը հեռուստացույց դիտելիս է եղել, լսել է, որ Գ.Պետրոսյանը Հ.Ավետիսյանը հայհոյել է ասելով <<կլրիս գլոխ>>, այդ ժամանակ իր ուշադրությունը այդ կողմը չի եղել և կարողացել նշել թե կոնկրետ ինչի համար է Գ.Պետրոսյանը հայհոյել Հ.Ավետիսյանին, միայն հայհոյանքը լսելով շրջվել ու տեսել է, որ այնտեղ են եղել նաև վաշտի անձնակազմից որոշ զինծառայողներ, սակայն չի հիշել, թե ովքեր, իսկ Հ.Ավետիսյանը Գ.Պետրոսյանին ասել է <<Խելոք մնա, մի հայհոյի>> և նրանց խոսակցությանը այդ պահին միջամտել են վաշտի զինծառայողները և թույլ չեն տվել այն շարունակվի, բացի այդ հաճախ եղել են դեպքեր, երբ տեսել է, որ Գ.Պետրոսյանը <<քֆուրով>> միակողմանի կատակ է արել Հ.Ավետիսյանի հետ, ինչից վերջինս վատ է զգացել, բայց պատասխան չի տվել: Բացի այդ, վաշտի զինծառայողների տարբեր խոսակցություններից տեղեկացել է նաև, որ 20.10.2017թ-ին, երբ վաշտի անձնակազմը կրակային պարապմունքից հետո, զբաղված է եղել զենքերի խնամքի աշխատանքներով Հ.Ավետիսյանի մոտ եղել է թվով 2 հատ ԱԿ-74 տեսակի ինքնաձիգի փամփուշտ, նրա կողքին նստած են եղել Արտյոմ Հովեյանը և Գ.Պետրոսյանը, նրանք դա նկատելով ասել են, որ դեռ նետի, Հ.Ավետիսյանը դրանք հանել գցել է հարակից փոսը, ինչը նկատել են Ա.Հովեյանը և Գ.Պետրոսյանը, ինչպես նաև այն, որ տվյալ ժամանակ Գ.Պետրոսյանը Հ.Ավետիսյանին անվանել է <<Գառլախ>>, որից հետո Հ.Ավետիսյանը ինքնաձիգն ուղղել է Գ.Պետրոսյանի վրա և ասել՝ <<Նախ, քեզ կխփեմ, հետո ինձ>>, ապա հանելով ինքնաձիգի վրա եղած պահեստատուփը ցույց է տվել, որ այնտեղ առկա են թվով 2 հատ փամփուշտ, դրանից հետո Գ.Պետրոսյանը Հ.Ավետիսյանին ասել է. <<Եթե զենքը պահում ես մարդու վրա ու չես կրակում ուրեմն դու բոզի տղա ես>> և այդքանով նրանց միջև խոսակցությունն ավարտվել է, իսկ Հ.Ավետիսյանը որոշ ժամանակ անց ամրակցված ինքնաձիգից կրակել գլխի շրջանին և որոշ ժամանակ անց մահացել է:

հատոր 3 Գ.Է. 190-194

<u>ՊԲ 38401 զորամասի 1-ին հրաձգային գումարտակի 3-րդ վաշտի զինծառայող, շարքային Ջաում Իսկանդարի Հասանյանը ցուցմունք է տվել այն մասին, որ</u> համատեղ

կազմով մարմնամարզություն են անցկացրել, որի ընթացքում իր հիշելով Հրաչը դարձյալ չի վազել՝ առողջական խնդիրների պատճառով: Այնուհետև ժամը 08:00-ի սահմաններում գնացել են ճաշարան, բայց չի նկատել Հ.Ավետիսյանը ինչ է կերել, քանի որ նա այլ սեղանի մոտ է եղել: Դրանից հետո տողանին չեն մասնակցել, այլ վերադարձել են զորանոց և կրակային համար ստացել զենքն ու հանդերձանքը: Դրանից հետո վաշտի կազմով, այդ թվում նաև Հրաչ Ավետիսյանը, ոտքով գնացել են հրաձգարան: Ժամը 09:00-ից 10:00-ն ընկած ժամանակհատվածում հասել են հրաձգարան, որտեղ բաժանվել են խմբերի՝ ըստ զինատեսակների և բաժանվել են ուսումնական կետերում, որտեղ պարապմունքներ են անցկացրել: Ժամը 13:00-ի սահմաններում վերադարձել է զորամաս, քանի որ ընդգրկված է եղել օրվա վերակարգում որպես վաշտի հերթապահ: Հրաչ Ավետիսյանը ընդգրկված է եղել նռնականետորդների խմբում և մինչև իր կողմից զորամաս գալը նրանց խումբ դեռ ուսումնական կետում պարապմունք չի անցկացրել: Ժամը 18:00-ի սահմաններում նկատել է, որ զորամասից վերադաս հրամանատարությունը արագ ավտոմեքենաներով դուրս է եկել և հետաքրքրվելով թե ինչ է պատահել, իմացել է, որ 15-րդ վաշտի զինվորներից մեկը հրաձգարանում ինքն իրեն խփել է: Ժամը 19:00-ի սահմաններում, գումարտակի հերթապահից իմացել է, որ Հրաչ Ավետիսյանը հրաձգարանում ինքն իրեն խփել է: Ավելացրել է նաև, որ նշված դեպքից մի քանի օր առաջ, ցերեկային ժամին վաշտի կազմում զորանոցի ննջարանում նստած ձմեռային գլխարկների և վերարկուների վրա սպիտակ գույնի ներկով՝ «շտրիխով», գրել են իրենց զինգրքույկի համարը և ըստ դասակների նստած են եղել աթոռներին: Այդ ընթացքում, շարքային Գևորգ Պետրոսյանը մի քանի անգամ մոտեցել է Հ.Ավետիսյանին՝ ձեռքով հարվածել է նրա պարանոցին և գլխին ու փախել: Գ.Պետրոսյանը իրեն պահել է այնպես, իբր թե կատակ է արել, սակայն Հ.Ավետիսյանը նրան լուրջ կերպով ասել է, որ չանի: Այդպես եղել է մի քանի անգամ: Այնուհետև, Հ.Ավետիսյանը վազել է Գ.Պետրոսյանի հետևից, բայց չի կարողացել բռնել: Իսկ երբ վերջինս դարձյալ նույն կերպ հարվածել է նրան, Հ.Ավետիսյանը կրկին վազել է նրա հետևից, բռնել, որից հետո սկսել են միմյանց քաշքշել և փոխադարձ հայհոյանքներ տալ, բայց թե կոնկրետ ինչ՝ չի հիշել: Այդ ընթացքում, Գ.Պետրոսյանը նաև բռունցքներով մի քանի անգամ հարվածել է Հրաչի կրծքավանդակի շրջանին: Ընդհանրապես Գ.Պետրոսյանի և Հ.Ավետիսյանի հարաբերությունները ինքը բնութագրել է որպես վատ: Վերջինս ձգտել է ընդհանրապես չշփվել: Նմանատիպ դեպք եղել է նաև մեկ այլ օր: Դարձյալ չի կարողացել ասել, թե կոնկրետ երբ, ինքնապատրաստման ժամին Հ.Ավետիսյանը կարել է ենթաօձիքը, իսկ Գ.Պետրոսյանը, դարձյալ նույն կերպ՝ իբր կատակով հարվածել է նրա պարանոցին, իսկ Հրաչը լուրջ ասել է, որ չանի, սակայն Գևորգը դարձյալ հարվածում էր: Այդպես հարվածել է ու փախել մի քանի անգամ, բայց էլի չեմ կարող ասել, թե կոնկրետ քանի անգամ:

հատոր 2 Գ.Է. 231-236,

ՊԲ 38401 զորամասի 5-րդ հրաձգային գումարտակի 15-րդ վաշտի զինծառայող շարքային Փիլոս Արտյոմի Ստեփանյանը ցուցմունք է տվել այն մասին, որ հատուկ

հարաբերություններ են ունեցել: Վերջինիս դպրոցում սովորելու տարիների համար բնութագրել է որպես համեստ, շփվող, ոչ կոնֆիլկտային, հարմարվող, գրագետ անձնավորության, ով սովորել է նորմալ, հատկապես ուժեղ է եղել մաթեմատիկա առարկայից: Շրջապատից մեկուսացած չի եղել, նրա վարքագծում որևէ տարօրինակություն չի նկատվել: Երբ ինքը ծառայության է նշանակվել 15-րդ վաշտում, Հ.Ավետիսյանը արդեն մի քանի օր ծառայելիս է եղել այնտեղ: Ծառայության ընթացքում ամեն օր շփվել են իրար հետ, մտերմություն են արել, շատ հարցերում կիսվել են իրար հետ, ինքը, որպես ծառայության ավելի մեծ փորձ ունեցող զինծառայող, նրան հաճախ դրա հետ կապված խորհուրդներ է տվել: Նա սրտի հետ կապված առողջական խնդիր է ունեցել, որը նրան հաճախ է անհանգստացրել, ինչի կապակցությամբ մի քանի անգամ դիմել է զորամասի բուժկետ, նաև ուղարկվել Մեխակավանի զինվորական հոսպիտալ՝ հետազոտման: Քանի որ նշված առողջական խնդիրը նրան խանգարել է ծառայողական պարտականություններն իրականացնելիս, Հ.Ավետիսյանը ցանկացել է գնալ զինհոսպիտալ և հնարավորության դեպքում զորացրվել: Հաճախ է իր մոտ ասել, որ դժվարանում է ծառայողական պարտականություններն իրականացնելիս, չի կարողանում լիարժեք հարմարվել ծառայությանը և անհամբեր սպասել է, թե երբ պետք է գնա զինհոսպիտալ, բայց այդուհանդերձ Հ.Ավետիսյանի վարքագծում որևէ տարօրինակություն չի նկատել, ցանկացած իրավիճակում ադեկվատ է եղել: Անձնական կյանքի վերաբերյալ նա շատ չի կիսվել իր հետ, միայն ասել է, որ ընկերուհի ունի, որը վերջերս վրաերթի է ենթարկվել և հիվանդանոց է պարկել, ապա ապաքինվել: Հ.Ավետիսյանը շատ է անհանգստացել ընկերուհու առողջական վիճակի համար: Վաշտի զինծառայողներից որևէ մեկին չի կարողացել առանձնացնել՝ որպես Հ.Ավետիսյանի հետ առավել մտերիմի կամ ընկերոջ, նա ավելի շատ շփվել է վաշտի սերժանտների հետ: Հ.Ավետիսյանը հաճախակի, գրեթե ամեն օր, հեռախոսով խոսել է ծնողների կամ ընկերուհու հետ, ազատ ժամանակ ունենալու դեպքում հիմնականում զանգահարել է հարազատներին: Հ.Ավետիսյանի մահվանից մոտավորապես մեկ ամիս առաջվանից սկսած՝ վաշտի ժամկետային զինծառայող, շարքային Գևորգ Պետրոսյանը սկսել է նրա հետ հաճախակի, <<իբրև>> կատակներ անել, սակայն իր և մյուսների տպավորությունն այնպիսին է եղել, որ Գ.Պետրոսյանը Հ.Ավետիսյանին ծաղրել է, քանի որ նրա վերաբերմունքը, նրա <<կատակները>> վերջինիս դուր չեն եկել, ինչի մասին բազմիցս ասել է նրան, սակայն Գ.Պետրոսյանը չի դադարեցրել նման վարքագիծը: Հաճախակի, օրվա մեջ մի քանի անգամ, Գ.Պետրոսյանը հանկարծակի մոտեցել է Հ.Ավետիսյանին՝ կամ նրա կողքով անցնելիս հարվածել նրա մարմնի տարբեր մասերին, կամ մատով <<կտացրել է>> նրա ականջին, կամ հայհոյել կամ ծաղրել է նրան: Հ.Ավետիսյանն ամեն անգամ նրան ասել էր, որ այլևս նման կատակներ չանի, եղել են դեպքեր, որ Հրաչը նրան փոխադարձ հարվածել է, բայց այդպիսի դեպքերը հազվադեպ են եղել, քանի որ Գ.Պետրոսյանը Հ.Ավետիսյանին հարվածելուց, կսմթելուց կամ այլ կերպ նրան ցավացնելուց հետո, հիմնականում ծիծաղելով փախել է, որպեսզի նա չհասցնի պատասխանել: Գևորգ Պետրոսյանի կողմից Հ.Ավետիսյանի նկատմամբ այդպիսի վերաբերմունքը պարբերական բնույթ է կրել, կրկնվել է գրեթե ամեն օր, նույնիսկ օրվա մեջ

Թիվ 91 հիմնական դպրոցի ուսուցչուհիներ, վկաներ Նունե Մերոբի Լալայանը, Անուշ Ասպարիկի Եղիազարյանը և Մանյա Արտաշեսի Սարդարովան նույնաբովանդակ ցուցմունքներ են տվել այն մասին, որ Հրաչ Արարատի Ավետիսյանը հանդիսացել է իրենց աշակերտը, նա լավ է սովորել դպրոցում, համադասարանցիների հետ շփվել է նորմալ, մեկուսացված չի եղել, բնավորությամբ հանգիստ է եղել, կոնֆլիկտային չի եղել, հարմարվող, էմոցիոնալ չի եղել, ճգնաժամային իրավիճակներին կտրուկ ձևով չի արձագանքել:

հատոր 5 Գ.Է. 76-84, 86-94, 96-98

ՊԲ 38401 զորամասի 5-րդ հրաձգային գումարտակի 15-րդ վաշտի զինծառայողներ, Ալբերտ Փաշայի Մրադյանը, Արման Համլետի Մկրտչյանը, Նարեկ Նելսոնի Ստեփանյանը, Արսեն Խորենի Ղազարյանը, Արամ Մեխակի Նազլուխանյանը, Հրաչ Հրանտի Շահինյանը և Արթուր Արայի Եղոյանը նույնաբովանդակ ցուցմունքներ են տվել այն մասին, որ համատեղ ծառայությունից ճանաչել են վաշտի զինծառայողներ, շարքայիններ Հրաչ Արարատի Ավետիսյանին և Գևորգ Հովիկի Պետրոսյանին: Կոնկրետ օրերը դժվարացել են նշել, բայց հաճախակի են ականատես եղել այնպիսի դեպքերի, որ Գ.Պետրոսյանը միակողմանի և անհաջող կատակներ է արել Հ.Ավետիսյանի հետ, որը արտահայտվել է Գ.Պետրոսյանի կողմից Հ.Ավետիսյանի գլխին, պարանոցին բաց ձեռքով հարվածելով և սեռական բնույթի հայհոյանքներ տալով, որը Գ.Պետրոսյանը հիմնականում արել է վաշտի անձնակազմի որոշ զինծառայողների ներկայությամբ, ինչը Հ.Ավետիսյանի դուրը չի եկել:

հատոր 3 Գ.Է. 368-374, հատոր 5 Գ.Է. 129-136, 121-127,
հատոր 3 Գ.Է. 223-228, 354-359, 335-339

Վերոգրյալը հիմնավորվել է նաև վկաներ Դավիթ Արմենի Եփրեմյանի,Կոլյա Իշխանի Մելքոնյանի, Կարեն Աշոտի Հարությունյանի, Նարեկ Վարուժանի Պետրոսյանի, Էդգար Գևորգի Ալթունյանի, Արսեն Դավիթի Խառատյանի, Դավիթ Արտակի Սարգսյանի, Միքայել Արամի Աբրահամյանի, Վահրամ Արկադիի Ադոյանի, Ազատ Էդիկի Աղաբաբյանի, Հովհաննես Սարգսի Հարությունյանի, Վլադիմիր Գևորգի Սամսոնյանի, Արայիկ Արմենի Ապրեսյանի, Հայկ Անդրանիկի Հարությունյանի, Տիգրան Սամվելի Ենգիբարյանի, Ստյոպա Անանասի Ավետյանի, Հրաչ Հրանտի Շահինյանի, Նվեր Էդիկի Գալստյանի, Արամ Արմենի Զախոյանի, Արմեն Շիրակի Գրիգորյանի, Նարեկ Մարգարի Սարգսյանի, Ալբերտ Սասունի Անանյանի, Կարապետ Ջանիբեկի Գրիգորյանի, Անտոն Աշոտի Ջոհրաբյանի, Գեղամ Մուշեղի Երեմյանի, Վահան Սամվելի Մնացականյանի, Վարդան Մելիքի Ասծատրյանի, Նիկոլայ Խորեն Մաիլյանի, Կարեն Գենադիի Բաղդասարյանի, Ֆրունզե Արմենի Մկրտչյանի, Գրիշա Ջաքայի Գրիգորյանի, Հրաչ Արթուրի Գրիգորյանի, Գուրգեն Արթուրի Իսանյանի ցուցմունքներով:

հատոր 1 Գ.Է 86-92, հատոր 1 Գ.Է 104-107, հատոր 1 Գ.Է 221-226, հատոր 2 Գ.Է 63-71,
հատոր 2 Գ.Է 90-95, 294-299, հատոր 2 Գ.Է 126-132, հատոր 3 Գ.Է 213-219, հատոր 2 Գ.Է 141-150
հատոր 3 Գ.Է 187-189, հատոր 2 Գ.Է 223-230, հատոր 2 Գ.Է 303-308, հատոր 3 Գ.Է 264-268,
հատոր 3 Գ.Է 1-9, հատոր 3 Գ.Է 121-127, հատոր 3 Գ.Է 132-138, հատոր 3 Գ.Է 178-182,

3) Ինչպիսին են եղել Հ.Ա.Ավետիսյանը հոգեվիճակը, հոգեբանական խառնվածքը և բնավորության գծերը:

4) Հ.Ա.Ավետիսյանը ինչպիսի անձնային, հուզական և մոտիվացիոն որորտի առանձնահատկություններ է ունեցել:

5) Ինչպիսին է եղել Հ.Ա.Ավետիսյանի հարմարվողականության շեմը, ինչպես է նա ընդունել իր շրջապատի իրականությունը և ինչ ազդեցություն է ունեցել դա իր հոգեբանականան վիճակի վրա:

6) Կարողացել է արդյոք Հ.Ա.Ավետիսյանը շրջապատող բանակային, ծառայողական իրականության մեջ դրսևորել իր անձնական հատկանիշները, բնավորության գծերը և խառնվածքը, թե ոչ, եթե ոչ, ապա ինչ ներանձնային հետևանքների է դա հանգեցրել:

7) Արդյոք Հ.Ա.Ավետիսյանի մոտ առկա է եղել շրջապատող իրականության և ներանձնային հատկանիշների զուգորդմամբ և համադրմամբ պայմանավորված այնպիսի հոգեբանական-հուզական իրավիճակ, որը կարող էր հանգեցնել վերջինիս կողմից ինքն իրեն մահացու հրազենային վիրավորում հասցնելուն:

8) Հ.Ա.Ավետիսյանը ինչ հոգեվիճակում է գտնվել ինքնասպանություն գործելու նախորդող պահին:

9) Հ.Ա.Ավետիսյանի ինքնասպանություն գործելու և Հ.Ա.Մկրտչյանի կողմից նրա նկատմամբ բռնություն գործադրելու միջև պատճառական կապ կա, թե ոչ:

10) Հ.Ա.Ավետիսյանի ինքնասպանություն գործելու և Մ.Աբրահամյանի կողմից նրա նկատմամբ բռնություն գործադրելու՝ ապտակելու միջև պատճառական կապ կա, թե ոչ:

11) Հ.Ա.Ավետիսյանի ինքնասպանություն գործելու և Գ.Հ.Պետրոսյանի կողմից նրա նկատմամբ պարբերաբար բռնություն գործադրելու և ծաղրանքի ենթարկվելու միջև պատճառական կապ կա, թե ոչ:

3. Փորձագետ/ներ/ին տրամադրել թիվ 91263417 քրեական գործի նյութերը, Հ.Ա.Ավետիսյանի զորակոչի անձնական գործը, բժշկական գրքույկը, մեծահասակի ամբուլատոր բժշկական քարտը և մանկան զարգացման պատմությունը:

4. Փորձագետ(ներ)ին խնդրել պատասխանել նաև այն հարցերին, որոնք թեև նշված չեն սույն որոշման մեջ, սակայն կառաջանան փորձաքննության ընթացքում, մտնում են փորձագետի իրավասության մեջ և որոնց պարզաբանումը կարող է կարևոր նշանակություն ունենալ փորձաքննության լիարժեքության համար:

5. Փորձագետ(ներ)ին պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 85 րդ հոդվածով նախատեսված փորձագետի իրավունքները և պարտականությունները, նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338 հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

ՀՀ ՔԿ ԶԲԳՎ երկրորդ կայազորային
քննչական բաժնի պետ, արդարադատության
երրորդ դասի խորհրդական՝ Դ.Ա.Ֆլջյան